

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ՎԱՉԳԷՆ Ա.-Ի ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (23 Սեպտեմբեր 1991 թ.)

Նախաստեղծման հեռու ժամանակներում, մեր քաջ Նահապետը Հայկ, արդարութեան երեքթևեան իր նետով ճեղքեց խաւարը բռնակալութեան և դրեց սահմանաքարը հայոց ազգի ազատ Տան: Այդ օրից ծնունդ առաւ ինքնիշխան արմենական երկիրը՝ Հայաստան:

Անցան դարեր, և հրաշք տեսիլքովը Սուրբ Լուսաւորչի, Աստուծոյ Որդին իջաւ Արարատեան աշխարհ ու իր հետ բերեց «լոյսը փառաց» որով բացուեց ճանապարհը մեր ազգի ոգեկան ազատութեան:

Այսօր երբ մեր պատմութեան նոր առաւօտն ենք դիմաւորում, հոչակումովը մեր նորածին հանրապետութեան անկախութեան, յիշենք հայրենաստեղծ մեր Հայկ Նահապետին և Սուրբն Գրիգոր Լուսաւորչին, որ Քրիստոսի արարչագործ լոյսով ոգեղինացրեց կեանքը հայոց, որով աշխարհի հորիզոնի վրա բարձրացաւ ծիածանը «փառաց լոյս» մեր անմահ Ռակեդարի: Նաև յետ այսու, մեր ազգի տենչանքը պէտք է լինի, անկախութեան ճանապարհով հասնել՝ ազատագրուած հայ ոգեկանութեան նոր բարձունքների:

Հայեր, որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, արթնացէք և ուխտեցէք՝ մնալ հաւատարիմ ազատն Հայկ Նահապետին և մեր հոգիների Լուսաւորչին ամենասուրբ:

Ողջոյն և օրհնութիւն Հայաստանի ինքնիշխան անկախ մեր հանրապետութեան:

Օրհնութիւն և փառք մեր ազատատենչ ու հաւատաւոր անմահ ազգին:

«Ի Տեառնէ եղև այս, և է սքանչելի առաջի աչաց մերոց: Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծացուք և ուրախ եղերուք ի սմա»: (Սաղմոս ՃԺԷ 23—24). Ամէն: